# Արձանագրություն N 2
# «ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

«05» դեկտեմբերի 2019թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Մխիթարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Լ. Հարությունյան |
| | Լ. Ոսկանյան, |
| | Վ Հարությունյան, |
| | Հ. Մայիլյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

**1. ընթացակարգի հայտերի բացման մասին**
(Ա. Մխիթարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում Armeps համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | |
|---|---|---|
| 1 | Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ | info@webex.am |
| 2 | ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ | maximiliangroup@gmail.com |
| 3 | ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ ՍՊԸ | d.shahbazyan@itresourses.am |
| 4 | «Դավթյան» ՍՊԸ | info@toolbox.am |

բ) հայտերի վերաբերյալ հարցումներ (պարզաբանումներ) և պատասխաններ չեն եղել Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**2. ընթացակարգի հայտերի բացման մասին**
(Ա. Մխիթարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

Scanned by CamScanner

ա) համապատասխանում են՝ <<ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ, <<ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ>> ՍՊԸ, <<Դավթյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը.

բ) չի համապատասխանում << Վեբէքս Թեքնոլոջիս >> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը.

Մասնավորապես՝ գնային առաջարկը ներկայացված է <<ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.22 պահանջներին անհամապատասխան, այն է նշված մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը: Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջների և սույն մրցույթի հրավերի 7.22 պահանջների՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գները՝ աղյուսակում

| ՀՀ | Մասնակիցների անվանումները | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները | | | **Նախահաշվային գին** |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ դրամ | | | |
| | | Ինքնարժեք | ԱԱՀ | Ընդհանուր | |
| **Չափաբաժին N1** | | | | | |
| «ictstat.am կայքի նոր ֆունկցիոնալության ավելացման» ծառայություններ | | | | | |
| 1 | Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ | 1 190 000 | - | 1 190 000 | **4 900 000** |
| 2 | ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 2 290 000 | - | 2 290 000 | |
| 3 | ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ ՍՊԸ | 2 454 000 | 490 800 | 2 944 800 | |
| 4 | «Դավթյան» ՍՊԸ | 3 890 000 | - | 3 890 000 | |

Scanned by CamScanner

Գնահատող հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել <<ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5>> ծածկագրով գնման ընթացակարգի նիստը՝ հարցում կատարել <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ պարզելու համար արդյոք << Վեբէքս Թեքնոլոջիս >> ՍՊԸ-ի www.armeps.am համակարգ ներբեռնված փաստաթղթերը ստորագրված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ թե՞ ոչ:
2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ից վերոնշյալ հարցման պարզաբանմանը տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում

Կողմ 5, դեմ 0

Գնահատող
հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Ա. Մխիթարյան

Անդամներ՝ ______________ Լ. Հարությունյան

______________ Լ. Ոսկանյան,

______________ Վ Հարությունյան,

______________ Հ. Մայիլյան

Քարտուղար՝ ______________ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner